

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն /նախկինում <<ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍՏ>> ՈՒՎԿ ՓԲԸ/ վերանվանվել է 03/02/2012թ.-ին:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն համաձայն իր քաղաքականության տրամադրում է առևտրային, գյուղատնտեսական, սպառողական վարկեր և երաշխիքներ: Վարկի մարումը և տոկոսների վճարումը կատարվում է համաձայն պայմանագրի ժամանակացույցի: Առևտրային, գյուղատնտեսական և ֆիզիկական անձանց տրամադրվող սպառողական վարկերը, երաշխիքները տրամադրվում են համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի: Վերոնշյալ վարկերի վարկավորման պայմանները ներկայացվում են ստորև՝

**Սպառողական վարկերի տրամադրման պայմաններ՝**

	<i>Առանց գրավի ապահովվածության սպառողական վարկեր</i>	<i>Գրավի ապահովվածությամբ սպառողական վարկեր</i>
Արժույթը	ՀՀ դրամ	ՀՀ դրամ
Վարկի գումարը	50,000 ՀՀ դրամ-2,000,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ-30,000,000 ՀՀ դրամ
Վարկի տևողությունը	3-18 ամիս	1-36 ամիս
Վարկի տարեկան տոկոսադրույքը	24%	24%
Վարկի տրամադրման վճար (միանվագ )	3%	3%
Վարկի սպասարկման ամենամսյա վճար	1%	0%
Ապահովվածությունը	ա/1-3 անձանց երաշխավորություն և /կամ այլ գրավ բ/ՈՒՎԿ հետ համագործակցող այն կազմակերպությունների աշխատակիցներին, որոնց հետ առկա է պայմանագիր, իրենց աշխատակիցներին վարկեր տրամադրելու վերաբերյալ: գ/ ա և բ կետերի չկատարման պարագայում ցանկացած այլ հաճախորդի, իր գործատուի գրավոր երաշխավորությամբ:	շարժական և/կամ անշարժ գույք, երաշխավորություն

**Առևտրային վարկերի և Գյուղատնտեսական վարկերի տրամադրման պայմաններ**

	<i>ՀՀ դրամով բիզնես վարկեր</i>	<i>ԱՄՆ Դոլարով կամ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով բիզնես վարկեր</i>	<i>Գյուղատնտեսական վարկեր</i>
Վարկի գումարը	200,000 ՀՀ դրամ-15,000,000 ՀՀ դրամ	500 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ- 40,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ,	100,000-4,000,000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման վճար	2.5%-3%	1.5%-3%	3%-4%
Տարեկան տոկոսադրույք	20%-24%	18%-22%	22%-24%
Սպասարկման ամենամսյա վճար	0%-1%	0%-0.8%	0%
Վարկի ժամկետը	3-24 ամիս	3-42 ամիս	3-24 ամիս
Արտոնյալ ժամկետ	0-4 ամիս	0-9 ամիս	0-6 ամիս

Ընկերության կողմից երաշխիք տրամադրվում է ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ առավելագույնը 3,000,000 ՀՀ դրամի չափով, 24 ամիս ժամկետով և երաշխիքի գումարի 15%-ի չափով վարձավճարով:

Առևտրային և գյուղատնտեսական վարկերի ապահովման ձևերը՝ երաշխավորություն կամ գրավ կախված գումարի մեծությունից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի և Ընկերության համապատասխան իրավական ակտերի:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով չի ներգրավում փոխառություններ, սակայն կանխիկ ձևով գնում և վաճառում է արտարժույթ, հետևաբար պարտավոր է պահպանել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բոլոր չորս նորմատիվները՝ «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը», «Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը», «Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը /Ն1/», «Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը»: Հաշվետու եռամսյակի ընթացքում այդ նորմատիվների գծով խախտումներ չկան, բացառությամբ «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը» նորմատիվի, որի գծով առկա է 91 օրվա խախտում /վերոնշյալը ներկայացված է հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հրապարակվող հաշվետվություն թիվ 30-ում/:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատողների քանակը հաշվետու եռամսյակում՝ 24 անձ:

«ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 2013թ-ի 3-րդ եռամսյակի միջանկյալ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը կարող եք գտնել Ընկերության վեբ.կայքում:

- Գլխավոր տնօրեն
- Հասցե
- Հեռախոս
- Ֆաքս
- Էլ. փոստ
- Վեբ. կայք



Արտաշես Տոնոյան  
 0007, Երևան, Արշակունյաց 69  
 (10) 44 56 64,  
 (10) 44 56 64  
 info@goodcredit.am  
 http://www.goodcredit.am